ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ն -02

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
13 փետրվար 2018թ.
№ Ն-02(H-02)2018
Ուժի մեջ է մինչև 29 հունիսի 2020 թ.

Սույն վկայական հավաստում է, որ «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմինը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես արտադրանքի սերտիֆիկացում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի փետրվարի 13-ի ««Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» № 110-Ա հրաման)՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 017/S-019) N 1-A Հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի:

ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա, 5-րդ հարկ ;

էլ. հասցե: info@shincertificate.net հեռ.:(+374 10) 52-67-24, ֆաքս.(+ 374 10) 54-14-01

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված ՀՀ տեխնիկական կանոնակարգերը՝

1. ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշում - միայն Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «2523 10 000 0» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք

2. ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 179-Ն որոշում - միայն Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «7214 99», «7213 91 100 0», «7217 10», «7312 10 610» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք

3. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 679-Ն որոշում - միայն Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «3917 21» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(ստորագրությունը)